

170

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊՐ. ԳՐԱԴԱՐԱՆ № 3
N: ԴԱՐԵՐ ՅԵՎ. ՄԱՐԴԿԱՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԸ 3

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

ՖԵՈԴԱՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՊՐԱԿԴ.

Փոխադրությունը ուղևորեցից ՅԵ. ԼՍ.Լ.Ա.ՅՍՆԻ

Գ. հրատարակություն

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1928

23 AUG 2017

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊՐ. ԳՐԱԴԱՐԱՆ
№ 3 ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԻ № 3

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

== ՖԵՈԴԱՆԻՉՄԻ
ՇՐՋԱՆՈՒՄ ==

ՊՐԱԿ Գ.

Փոխգործընկեր ռուսերենից ՅԵ. Լ. Ա. Լ. Ա. ՅԱՆԻ

Գ. ՎԵՐԱՄԵԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ն ՈՒ Յ ՈՒ Ն

ՅԵՐԵՎԱՆ-1923

1/0

ՅԵՐԵՐՈՐԴ ՄԱՍ

ՖԵՈՒԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԻՑ

1. ՎԱՐԵԼԱՆՈՂ ԲԱՆԱԼՈՒ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆ.

Յեթե յոթնարյուր տարի առաջ մարդ կա-
րողանար բարձրից նայել Վլադիմիրի նահանգի
այժմյան Մուրոմյան գավառի վրա, իր վոտների
տակ մի այսպիսի տեսարան պիտի տեսներ. ա-
մեն կողմ տարածվում է անսահման, կանաչ ան-
տառը, վորի միջով ձգվում է, վորպես արծաթե
լաջն ժապավեն, Ոկա գետը: Անտառի այս ու այն
մասում ընկած են, կարծես վորպես կղզիներ,
փոքր դաշտեր, փոքրիկ անակներով: Այս դաշ-
տերի վրա վիստում են մարդիկ, չես ու առաջ
դնում, կարծես մի գործ են շինում. վորքան
փոքրիկ, վորքան թույլ և աննշան են թվում
դրանք այս անսահման, անվերջ անտառի մեջ:
Թվում է, թե անսահման անտառի կանաչ պատերը
կմիանան և կուլ կտան այդ կղզիները, իրենց
անակներով ու մարդկանցով: Այդ հին ժամանակ-



№ 765

Գրառիպար № 785 (բ)

Տիրաժ 4000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ներում այս անանցելի անտառներն ու ճահիճները ծածկում էին վոչ միայն Մուրոմյան գավառը, այլև Ոկայի և վերին Վոլգայի մեջ ընկած ընդարձակ տարածության մեծ մասը, վոր այժմ կազմում է Մոսկովի, Ռյազանի, Նարաուսովի և Վլադիմիրսկի նահանգները: Այս անտառներում ոթևան էին գտնում հարավային Ռուսաստանի գյուղացի փախստականները, վորոնց հանգիստ չէր տալիս թափառականների և իշխանների թշնամությունը:

Սրանք անտառում ընտրում էին գետի մոտ և փոքր ինչ բարձր տեղ, մաքրում էին ծառերից փոքրիկ տեղեր և վարում էին, ապրում էին փոքրիկ տնտեսութունով, վորովհետև բնակչության համար հարմար տեղ քիչ կար: Բայց այս չեկողները մեծ տարածության հետամուտ չէին լինում. չերկրագործը թափառական չէ, վորին պետք է ընդարձակ արոտատեղի: Այնտեղ, ուր ապրում է մի թափառական անասնապահ՝ չերկրագործությամբ կարող են ապրել միքանի մարդիկ: Յեկվորը այնքան հող էր մշակում, վոր կարողանում էր կերակրել իրեն իր ընտանիքով. նա այդ հողը համարում էր իրենը, քանի դեռ աշխատում էր նրա վրա: Այս պատճառով էլ ասում էին «այն հողն է իմը, վորի վրայով անցել է իմ կացինն ու արորը»:

1920 թվին Ոկայի մոտիկ մի դաշտում ապրում էր Կիևից փախած մի ընտանիք՝ տղամարդը, կինը, 17 տարեկան տղեն և յոթնամյա աղջիկը: Ապրում էին դրանք այդտեղ արդեն հինգ տարուց ի վեր: Սկզբում դժվար էս չեղել ընտելանալ այդ նոր տեղին. խուլ ու մռայլ էր թվում այս նոր չերկիրը, սակայն հանգիստ էր, պետք էր միայն գիտենալ աշխատել: Այստեղ պետք էր կռվել վոչ թե թափառականների, այլ անտառի հետ. պետք էր կացնով ու կրակով խլել նրանից ամեն մի թիղ հողը: Ահա և այժմ բնակության վեցերորդ տարում պետք էր նոր դաշտ պատրաստել, առաջինն արդեն հոգնել էր և լավ բերք չէր տալիս: Այս պատճառով հայրը վորդու հետ գնացին տեղ վորոնելու:

Յերկար թափառեցին նրանք անտառում, մինչև վոր հարմար տեղ գտան. ճիշտ է, իրենց բնակատեղից հեռու չէր, բայց դրա փոխարեն գետը մոտ էր և անտառը շատ մեծ չէր: Գտան և սկսեցին աշխատել: Համերաշխ հնչում էին կացինները խուլ անտառում, մեկը մյուսից հետո ընկնում էին ծառերը և որեցոր ափելի և ափելի ընդարձակվում էր դաշտը: Բայց հեշտ չէր կտրել միապաղաղ անտառը. չերկար աշխատեցին կացիններով մեր չերկրագործները, շատ քրտինք թափեցին, մինչև վոր մաքրեցին մի չեր-

կու գեսայաւին տեղ: Վերջացնելով այդ աշխատանքը վերադարձան տուն: Այս տարի այդ տեղում ել վոչինչ չունելին անելու:

Հետեւյալ տարին վերսկսեցին աշխատանքն, ամառվա վերջին մտածեցին ցանել: Կարտած ծառերը այդ տարվա ընթացքում փոքր ինչ դորացել էին, նրանք կրակ դրին այդ ծառերի տակ դանադան կողմերից: Կրակը ոճապտուկտ անցավ չոր ճուղերի վրայով և շուտով անտառում սկսվեց վառվել մի հսկայական խարուկ:

Թանձր ծուխը բարձրացավ չերկինք, ճուղերը ճաճտում էին և կուշ գալիս կրակի մեջ: Յերբեմնապես ծխի միջից դուրս եր պրծնում հրալին լեզուներով բոցը և խուրձերով թափվում էին կայծերը: Վախեցած թռչուններն աղմուկով թռչում էին անտառի վրայով, գազանները հեռու էին փախչում այդ վտանգավոր տեղից:

Վերջապես կրակը հանգավ: Ամբողջ դաշտը ծածկվեց մոխրի կուլտերով, վորի միջից տեղտեղ ցցվում էին ծառերի խանձված կոճղերը: Աշնանը դաշտը ցանեցին առանց վարելու: Հողն սկսեցին վարել չերկրորդ ցանքսին, ամենաղբվար բանն արդեն արված եր, չերկրագործին ոգնութչան եր հասել այս գործում չերկաթե կացինը: Նուշն աշնանը, տեղափոխվեցան նոր տեղը, տեղափոխեցին իրենց ունեցած չունեցածը:

Բայց չերմր ժամանակով: Վոչ ավելի, քան 5—6 տարով: Հետո նորից պետք եր կտրել անտառը, վառել ծառերը, վորպեսզի մոխրով պարտացնեն չերկիրը, այլապես այստեղ հացահատիկ չի բուսնիլ:

Այսպիսի անտեսութչուն եր տարվում այս անտառոտ ամբողջ տեղում, այդ անտեսութչունը կոչվում եր վարելահող բանալու անտեսութչուն:

Համառ և ծանր աշխատանք եր հարկավոր, վորպեսզի կարելի լիներ վարելահող պատրաստել, իսկ խեղճ չերկրագործը հազիվ եր հաց հայթհալթում իր ընտանիքին. գործիքներ քիչ կային, այն ել վատ. ընդամենը չերկաթե կացին ու դանակ, փայտե արոր ու տափան: Այժմ չերկաթն ու պողպատը սովորական գործիքներ են, վոր ամենքը փոքր ի շատե կարող են ձեռք բերել, մինչդեռ հնումը չերկաթ քիչ կար և շատ թանգ եր գնահատվում: Կոտրվեց կացինը, այնքան ել հեշտ չեր նորը ձեռք բերել:

Բացի չերկրագործութչունից, մարդիկ պետք եր զբաղվելին նաև ոժանդակիչ զբաղմունքներով՝ վերսորդութչամբ, ձկնորսութչամբ և վալրի մեղվապահութչամբ:

Այսպես անցնում էին չերկար ու ձիգ տարիներ, մարդիկ բազմանում էին ու բազմանում,

կարողում աւ վառում անտառները, մեծացնում վա-
րելահողերը:

Մարդիկ խլեցին անտառից չերկրագործու-
թյան հարմար ամբողջ հողը: Այնտեղ՝ ուր կանգ-
նած ելին մենավոր տնտեսութունները, չերեա-
ցին ամբողջ բնակավայրեր:

Տասը թափառական կարող ելին ապրել այն
հողամասի վրա, վորից կարող եր ոգտվել միայն
մի վայրենի գազանավորս:

Այդ ձևի տնտեսության ժամանակ չերկրա-
գործին հարկավար ե տասն անգամ ավելի քիչ
հող, քան թափառական անասնապահին, և հար-
յուր անգամ քիչ, քան գազանավորսին:

2. ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ. ՅԵՌԱԴԱՇՏՅԱՆ ՍԵՐՄՆԱՎԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

Գարնանային դաշտային աշխատանքների ա-
մենայեռուն ժամանակն ե: Գյուղացիներն ոգ-
տվում են լավ չեղանակից և աշխատում վեր-
ջացնել գարնանացանը: Մըջունների պես տըք-
նում են նրանք իրենց արտերի վրա, միջանիսը
վերջացնում են վարը, մյուսները ցանում են,
իսկ չերրորդները տափաններով տափանում են
ցանքսերը: Միայն չերբեմն գարնանացանի դաշ-

տերում չերևում են չվարած մոխրագուշն շեր-
տեր: Վորբի նման նալում են նրանք մշակված
արտերի միջից: Պետք ե վոր այս շերտերի տե-
րերին մի վորե ե գժբախտություն պատահած
լինի, ալլապես նրանք չեյին կորցնի թանգագին
ժամանակը. այժմ ամեն մի ժամը թանգ ե: Ձե-
ռից բաց կթողնես հարմար ժամանակը—կմնաս
առանց գարնանացան հացի:

Վերջացած ե ցանքսը: մնում ե սպասել
հնձին: Այս միևնուշն արտից անցյալ տարի հա-
վաքել ելին աշնանացան հացահատիկը, այժմ
կհավաքեն գարնանացանը, իսկ հետո չեկ հարկա-
վոր ե, վոր հողը հանգստանա: Մինչև մյուս տար-
վա աշունը նրա վրա վոչինչ չպետք ե ցանեն.
նա մնալու չե հանգստանալու: Աշնանացանի և
գարնանացանի համար գործ կըրվեն ուրիշ չեր-
կու դաշտեր: Սրանցից մինն արդեն հանգստա-
ցել ե մի տարի, իսկ մյուսը դեռ պետք ե մի
տարի ծառայե, վոր հասնի նրա հանգստանալու
ժամանակը:

Յեվ ահա այսպես ե կատարվում հնուց. չե-
րեք արտերից ամեն մինը չերկուական ցանքսից
հետո մի տարի հանգիստ ե մնում:

Դուք կասեք, թե ով չգիտե, վոր վարելա-
հողը բաժանվում ե չերեք դաշտերի՝ աշնանա-
ցանի, գարնանացանի և հանգստյան:

Ճիշտ է. այժմ ամեն մի գյուղի չերեխա այս դիտե. մինչդեռ մեր նախնիքը հազար տարի առաջ այդ չդիտելին: Անտառոտ տեղերում ծառերը կտրաում ելին, դաշտային տեղում խոտը վառում և վարում, ցանում: Զորս-հինգ անգամ ցանելուց հետո այդ թողնում ելին, մի ուրիշ հողաբաժին ցանում, հետո՝ մի չերրորդը:

Մի 25 տարուց հետո չերկրագործը վերադառնում էր առաջին հողաբաժին, վորն արդեն հանգստացել էր և կարող էր լավ բերք տալ: Այս տեսակ վարը կոչվում է միդաշտյան, վորովհետև միշտ ցանվում է միայն միևնույն հողաբաժինը:

Միդաշտյան սխտեմից, վորի ժամանակ մի քանի տարի ցանած և հոգնած հողաբաժինները թողնվում ելին անմշակ, անցել են յեռադաշտան սխտեմին: Սրա ժամանակ հանգստանում է միայն հողաբաժնի չերրորդ մասը, իսկ չերկու չերրորդը չենթարկվում է ամեն տարի աշնանացանի և գարնանացանի: Ահա այս յեռադաշտյան սխտեմն էլ գործադրվում է այժմ մեր մեջ:

3. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՆՈՂԻ ՆԵՏ ԿԱՊԵԼԸ:

Իվան Վասիլևիչ թագավորի և մեծ իշխանի որով չեղել է Ստեփան անունով մի մարդ, վո-

րին տվել են Բեգուկլադիցա մականունը: Նա գյուղացի չէ չեղել, միայն սեպհական հող չի ունեցել, ապրել է Աֆանասիյ Բուչնոսով իշխանի վորդու կալվածքում: Սա ընկերացել էր իր սանահեր Սուչոկ մականվանված Միքայելի հետ և կալվածատեր Բուչնոսովի Վարաբյովո գյուղի ազատ հողերում շինել ելին իրենց համար խըրճիթ, մառան, 2 ախոռ, և պայմանավորվել ելին, վոր իրենց տրվի վարեխոզ, չերկու չետվերտ հաճար, նույնքան վարսակ, այդչափ էլ հացահատիկ այն պայմանով, վոր կալվածատիրական բոլոր ծանրությունները կրեն, պետական հարկերը վճարեն, կալվածատերին հասանելի տուրք տան և կալվածատիրոջ հրամայած բոլոր գործերը կատարեն:

Այսպես կապվել ելին Բեգուկլադիցան և Սուչոկը Բուչնոսով կալվածատիրոջ հետ և սկսել ապրել նրա գյուղում: Ապրեցին մի տարի, չերկու տարի, չերեք տարի... և փաթաթվեց նրանց վզին մի չարաբաստիկ ցավ մի ցավ, վորից վոչ մի կերպ չեն կարողանում ազատվել:

Մի տարի ամբողջ Ռուսաստանում ցանքսը չեկավ. աղքատությունն ու սովամահը տիրեց ամբողջ չերկրին, շատ գավառներից մարդիկ քաղաքները քաշ չեկան և վողորմությունով սկսեցին ապրել, իսկ գյուղերում միացողները քաղ-

ցից թեւաացան և շատերը սովամահ չեղան։ Տարածվեցին տարափոխիկ հիվանդութիւններ։ Այսպէս՝ հացի պակասութիւնից և տարափոխիկ հիվանդութիւններից դաժարկվեցին քաղաքներն, ավաններն ու գյուղերը։ Միջոցով Սուչոկն ու նրա կիներն ել կենդանի չմնացին։ Խեղճ վորբերը դառն արցունքով որնիրուն բղավում ելին։

Յուրեւեց գյուղի փողոցում մեծ աղմուկ և տիրում։ հավաքվել են աշտեղ ամբողջ գավառից գյուղացիներ։ աշտեղ է և՛ Ֆեդյա Գուտինը, և՛ Դանիլկո Մուրաշը, և՛ ջրաղացպան Նեկլյուզկոն, աշտեղ է և՛ համայնքի ավագը, և՛ հարկ զնոդները, նրանք, վոր նստում են գյուղի հրապարակում և պետական հարկը բաժանում գյուղացիների վրա։ Ահապին աղմուկ է բարձրացել, և ամենից ավելի Բեզուկլադիցան է բղավում։ նա շատ վիրավորվել է, վոր ավագը նրան մշուաններից ավելի չէ հարկ նշանակել։

«Կեղեքվեցանք, բղավում է նա, մնանկացանք անբերրութիւնից, տարափոխիկ հիվանդութիւններից, բռնութիւնից, հարկերից, ել չենք կարող ամեն մի դատարկբանի համար վճարել։ Բղավում է Ստեփանը, գոչում է Ստեփանը, սակայն ավագը նրան չի լսում։ «Այդ իմ գործը չէ, ստում է նա, ինձ հրամայված է առանց խղճալու, առանց խնայելու, լիովին հավա-

քել պետական հարկը։ ծանրութիւնը մենք բուրս ել կրում ենք, մեկս մյուսի համար վճարում, և չեթե դու չեյ, Ստեփան, չլինիս, բո նեղութիւնդ ել մենք կքաշենք։

Ստեփանը գլխակոր գնում է տուն, իր յետին չքավորութիւնը խփում է աչքին։ մերկութիւն, դատարկութիւն, ցրտութիւն, քաղց, ուժասպառութիւն... Ինչո՞վ վճարե պետական հարկը։

Յեկավ գարունը։ հուլիսին արծարծվեցին, ամրան աշխատանքից հետո առատ աշունը վտաի կանգնեցրեց խեղճին։ բայց հեռու չեր ձմեռը։ մի կերպ քաշ տվեց, մինչև վոր չեկավ Ս. Գեվորգի տունը։ Ստեփանը զգաց, վոր քաղցը կըրկին սպառնում է իրեն, մտածեց գլուխն առնել, հեռանալ, բայց պետք է կալվածատիրոջից ազատվել, նոր զբաղմունքով նոր տեղում բախտ վունել։

Առավոտը վաղ, մտատանջ ու համր քաղերով Ստեփանն ուղևորվեց դեպի կալվածատեր Բուչնոսովի տունը։ Վերջինս կանգնած եր կրաւրանը։ հենց վոր Ստեփանին տեսավ, իսկույն հասկացավ նրա մտադրութիւնը։ «Բալև, ասեց, Ստեփանիկ, միտքդ դրել ես հեռանալ։ Ստեփանը լուռ կանգնեց։ Կալվածատերը շարունակեց. «Տիշում ես պայմանդ, հիշում ես, վոր վերջերի չերկու չետվերտ հաճար, այդքան ել վար-

տակ, մի այդչափ ել հացահատիկ,—այդ բոլորը
չես վերադարձրել, վնչ հաճարը, վնչ վարսակը,
վնչ հացահատիկները, և հանգիստ ապրեցիր 8
տարի շարունակ, այժմ դեռ չերեք տարվա չե
տանդ վարձը չես վճարել՝ ուզում ես հեռանալ.
կարող ես այդ բոլորը վճարել»։ Այսպես վրա չեր
տալիս Բուչնոսովը, իսկ Ստեփանը լռում եր։
Ստեփանը տեսնում ե, վոր չի կարող հեռանալ.
Ժանը կարիքը շատ խիստ ե կապել նրան Բուչ-
նոսովի հետ։ Ահա քեզ սև ուր։

XVI դարում Ռուսաստանում Ստեփան Բե-
զուկլադիցիայի նման շատ գյուղացիներ կային։
Համարյա ամբողջ հողը պատկանում եր ազնվա-
կաններին, կալվածատերերին և վանքերին, և
գյուղացիները մի կերպ կապալով ելին վերցնում։
Գյուղացիները գալիս ելին կալվածատիրոջ մոտ
մեծ մասամբ դատարկ ձեռներով, և նրանից
ստանում ելին սերմ, չերկրագործական գործիք-
ներ, խրճիթ, վարելահող և այլ ամեն տեսակ
անհրաժեշտ բաներ, առանց վորոնց չեր կարելի
ապրել, Կոռին և հարկին ավելանում եր նաև
պարտքը։ Սովորության իրավունքով գյուղացին
կարող եր վճարել կալվածատիրոջը աշնանը՝ նո-
յեմբերին իր պարտքը և ժամանակակետից առաջ
հեռանալու համար ել տուգանք և դնալ ուր ու-
զում եր։

Բայց շատ քչերին եր հաջողվում այդ։ Նույն-
նիսկ այն դեպքում, չերբ գյուղացին շատ փոքր
գումար եր վերցրել, տաս տարուց հետո հեռա-
նալիս ելի 300 ռ. պետք ե վճարել կալվածա-
տիրոջը. իսկ այն ժամանակ այդ 300 ռուբլին
արդեն մեծ գումար եր համարվում։ Ո՞վ կարող
եր վճարել։ Միայն մի չելք եր մնում—ծածուկ-
հեռանալ, փախչել։

4. ՍԵՎ ՈՒ ՍՊԻՏԱԿ ՎՈՍԿՈՐ

Մի՞cs եմ յեղել մեծ կալվածատերեր.—Յերկ-
րագործական աշխատանքը շատ ավելի լավ ե
սնուցել մարդկանց, քան նախնական վորսոր-
դությունը։ Նա ապահովել ե մարդու սնունդը
շատ ավելի, քան գազանների վորսը, իր պատա-
հարներով և վտանգներով։ Յերկրագործները ա-
ռատ տարիներին կարող ելին ձմռան համար այն-
պիսի մեծ պաշար պատրաստել, վորի մասին
վորսորդները գաղափար անգամ չեն ունեցել.
հացահատիկներ, տնալին կենդանիներ, թռչուն-
ներ, անասնապահության և թռչնաբուծության
արդյունքներ, այս բոլորը չերկար ժամանակով
ապահովում եր չերկրագործին, և ահա թե ինչու
չերկրագործ ժողովուրդն անհամեմատ արագ եր
բազմանում, քան վորսորդական տոհմերը, վո-

րոնք դարերի և հազարավոր տարիների ընթացքում մնում ելին սակավանգամ, թույլ, և ստիպված ելին լինում նահանջել չերկրագործների հարձակումների միջոցին:

Յերկրագործի այս համեմատական բարորոթությունը միշտ ել արժեցել ե նրան մեծ, լարված աշխատանք, իզուր չե վոր ամառվա դաշտային աշխատանքներն այժմ ել տաժանելի չեն համարվում: Սակայն միայն այս դաշտային ծանր աշխատանքը չի չեղել չերկրագործի գլխավոր տանջանքը: Նրանց անխուսափելի ցավը չերկար ժամանակ կայացել ե նրանում, վոր ինքնուրույն չեն չեղել, վոր իրենց ամբողջ կյանքում կախված են չեղել հարուստ մարդկանցից, — մեծ մասամբ նրանց համար են աշխատել:

Դուք կարդացիք, թե ինչպիսի մեզանից 400 ասորի առաջ ռուս գյուղացի Բեզուկլադիցան ընկավ կալվածատեր Բուչնոսովի թակարդը և չկարողացավ նրանից հեռանալ, հակառակ իր բոլոր ցանկություն: Այդպիսի անելանելի դրություն մեջ ելին ընկել մի ժամանակ շատ գյուղացի չերկրագործներ, վոչ միայն Ռուսաստանում, այլ և ուրիշ չերկրներում: Ինչու եր կայանում Բուչնոսովների ուժը, վոր թույլ եր տալիս նրանց՝ իրենց հետ կապված պահել գյուղացիներին և ստիպել աշխատելու: Բանը նրանումն ե, վոր չերկրագործությունը չի

7-273394

կարելի պարապել առանց վարելահողի, առանց արորի ու գութանի, առանց աշխատող չեղների, առանց սերմի: Պետք ե ունենալ, գոնե, մի փոքրիկ վարելահող, մի քանի փոքրիկ գործիքներ, առանց վորոնց չի կարելի վար ու ցանքս անել, ցանքսը հնձել, կալել ու կալսել: Մի խոռոչով՝ տնտեսական շատ պայմաններ կան, վորպեսզի կարելի լինի չերկրագործությունը պարապել. սա շատ ավելի բարդ ե, քան վորսորդությունը: Սա պահանջում ե արդյունաբերական միջոցներ, առանց վորոնց գյուղացին չի կարող գործադրել իր աշխատող ձեռքերը, վորքան ել ուժեղ լինեն նրանք: Մի ժամանակ, շատ հին անցյալում, նախնական սողմնային չերկրագործության միջոցին, մարդիկ վարելահողը չեյին մշակում, անասուններ չեյին աշխատեցնում, վարելահողը շատ ընդարձակ եր և վոչ վոք չեր գնահատում այն: Այն ժամանակ ցանքս անողը կարող եր առանց ուրիշի ոգնություն ել իր գործը կատարել. այն ժամանակ չերկրագործները միմյանցից շատ չեյին տարբերվում, վոչ իրենց հմտությունը, և վոչ ել ունեցած միջոցներով: Բայց ժամանակի ընթացքում չերկրագործությունը հետդիտե դժվարացավ և բարդացավ: Նա հնարավոր դարձավ միայն նրատակաց կյանքի ընթացքում, վորոշ վարելահողի շրջանում, և պահանջեց արտադրական միջոցներ:

Յերկրագործութիւնը ոժտողակիչ, պատահական
դադարմունքից դարձաւ մարդու հիմնական, գլխա-
վոր պարապմունքը։ Սակայն դրա հետ միասին
յերկրագործների միջից առանձնացան և բարձրա-
ցան ուժեղները թուլերից, հարուստներն՝ աղ-
քատներից, շատ հող ունեցողները՝ քիչ կամ բո-
լորովին չունեցողներից։ Ուժեղները խելով
հողը՝ հարստացան։ Յեւ վորովհետեւ հողը կազ-
մում եր գլխավոր հարստութիւնը, ուստի սրա-
նով նրանք կախման գրության մեջ դրին հողա-
գործներին։

Առաջացաւ յերկու դասակարգ՝ յերկրա-
գործների բազմանգամ դասակարգ և կալվածա-
տերերի սակավաթիւ դաս։ Այն՝ ինչ չկար մարդ-
կանց վոչ թափառական կյանքի ընթացքում և
վոչ նախնական յերկրագործության ժամանակ,
այն անհրաժեշտ դարձաւ յերկրագործության
բարձրացման միջոցին։

Յերկու վոսկոբ.—Շատ դարերի ընթացքում
հողագործ գյուղացիներն աշխատում ելին վարե-
լահողի վրա, իսկ հողատերերն ոգտւում ելին
գյուղացու աշխատանքի արդիւնքից և իրենք
ձեռք չելին տալիս «սկ» աշխատանքին։ Ընդար-
ձակ հողերի սեփականատերերն հարկադրում ելին
գյուղացիութեանն աշխատանք ու քրտինք թա-
փել իրենց հողի վրա և սրա փոխարեն հատկաց-

նում ելին նրանց հնձի մի մասը, վերցնում ելին
գյուղացիներից նրանց կենդանիների, թռչուն-
ների մի մասը և պահանջում նրանց անտեսու-
թյան այս կամ այն արդիւնքը։ Իրենք հողատե-
րերը չելին աշխատում, բայց ասպնոված ելին
ուրիշի աշխատանքով։

Սկզբում կարիքն ստիպում եր գյուղացիե-
րին՝ գնալու հողատիրոջ մոտ, կապալով վերցնե-
լու հող, պարտք վերցնելու դրամ, և ոգնութիւն
հայցելու։ Կարիքն ստիպում եր նրանց համա-
ձայնելու աշխատանքի ծանր պայմաններին, ու-
ժեղ ու հարուստ մարդկանց առաջարկած ծանր
աշխատանքի լծին։ Հետագայում հողատերերն
սկսեցին իրենց իրավունքը վերադրել գյուղա-
ցիների աշխատանքի վրա, գյուղացիներն ել
սկսեցին իրենց պարտաւորված զգալ կատարե-
լու հողատերերի պահանջները։ Գյուղացու շատ
սերունդներ անտրտունջ աշխատեցին հողատե-
րերի արտերի վրա (կոռ), կտրում ելին, արմա-
տախիլ անում անտառները, վճարում ելին տե-
րերին հողային հարկ, տալիս ելին ընծաներ, տե-
րերի համար տներ շինում, զանազան ծառայու-
թիւններ կատարում։ Հողատերերի շատ սե-
րունդներ մեծացել և ապրել են լ'րկրադործ դա-
սակարգի աշխատանքով, չզգալով իրենց ձրիա-
կերութիւնն ու բռնութիւնը։ Հեռզհետե կազ-

մակերպվեց հողագործ գյուղացիներին մի իրավա-
դուրի դասակարգ, վոր դատապարտված եր իր
ամբողջ կյանքում աշխատելու, իսկ այս դասա-
կարգի վրա իշխում եր մի այլ, հողատերերի
դասակարգ, վոր մենաշնորհված եր ոգտվելու
ուրիշի աշխատանքից:

Տերերի դասակարգը համարվում եր «ազ-
նիվ», չերկրագործական աշխատանքը նրան թվում
եր անարժան և ստորացուցիչ: Նա, իր կարծի-
քով, կոչված եր կառավարելու ճորտ գյուղա-
ցիներին, չարչարելու նրանց. նրա գործն եր
զվարճանալ վորսորդությամբ, պատերազմել, ու-
տել, խմել խնջուքներում, բայց վոչ յերբեք
զբաղվել ֆիզիքական աշխատանքով: Հողատիրո-
ջից վերցրած պարտքի կամ վորևե ոգնության
համար վճարում եր ինքը, գյուղացին, նրա վոր-
դիները, թոռները և սերունդներն անխոնջ աշ-
խատանքով և իրենց ազատության կորուստով.
գյուղացին չեր կարող հեռանալ իր տիրոջից վոչ
մի տեղ, գյուղացուն ժառանգաբար անցնում եր
հպատակվելու և աշխատելու պարտավորությու-
նը, իսկ տերերին ժառանգաբար իրավունք եր
տրվում հրամայել գյուղացիներին և ստիպել
նրանց աշխատելու: Հողատերերն ու գյուղացի-
ները չերկու տարբեր տեսակի մարդիկ ելին,
առաջնի վոսկորը սալիտակ, չերկրորդին՝ սև եր:

Դուք հիշում եք, թե ով եր իշխում, կառա-
վարում և դատ կտրում վորսորդ և թափառա-
կան տոհմերի մեջ. — սերնդի ավագները, նրանց
հետ արյունով կապված ելին սրնդի կրտսեր
անդամները և այդ ազգակցության վրա հիմնված
եր ավագների իշխանությունը: Ընդհակառակը,
նստակցաց չերկրագործության շրջանում պարոն
հողատերերը խստիվ տարբերվում ելին իրենց
գյուղացիներից, իրենց նրանցից բարձր ելին
դասում, հողատերերը ազնիվ մարդիկ ելին, իսկ
գյուղացիները՝ գռեհիկ, վորոնցից գարշելի հոտ
եր գալիս: Բարեկամանալ գյուղացու հետ, նշա-
նակում ե նվաստացնել նշանավոր սերունդը: Տե-
րերի իշխանության հիմունքը նրանց հողային
տիրապետությունն եր:

Հին Հայաստանում մեծ և ուժեղ հողատե-
րերը կոչվում ելին նախարարներ, իշխաններ,
հնտազայում՝ մելիքներ, ազնվականներ, կալվա-
ծատերեր: Արևմտյան Յեմրուպայում՝ բալոններ
(վորից և առաջացել ե մեր պարոն բառը), կոմ-
սեր, հերցոգ, լորդ և այլն: Նրանց ուժը չափ-
վում եր իրենց տիրած հողերի մեծությամբ և
ճորտերի քանակով:

Մեծ հողատիրությամբ ոգտվում ելին աշ-
խարհական ազնվականներն ու հոգևորականու-
թյունը: Վանքերին պատկանում ելին շատ ան-

գամ ահագին հողամասեր, վորոնց վրա աշխատում ելին հարյուր հազարավոր ճորտեր: Ազնվականների հետ հոգևորականութունն ել համարվում եր բարձր դասակարգ աչն յերկրներում, ուր նրանք տիրում ելին իրավագուրկ ժողովրդին:

5. ՔԱՂԱՔՆԵՐ

Միջին դարերում զորեզ տոհմերը հարձակվեցին թույլ տոհմերի վրա և նրանց տիրելով ստրկացրին, իսկ նրանց յերկիրը նրանք բաժանեցին իրենց նշանավոր զորապետների մեջ. այսպիսով առաջ յեկան ավատական իշխաններ: Սրանցից շատերը բարձր, անառիկ տեղերում շինեցին իրենց համար ամրոցներ կամ դղյակներ, շրջապատեցին իրենց լաչն խրամատներով ու պարսպով և այդտեղ ել սկսեցին ապրել՝ թշնամիներից պաշտպանվելու պատնեշ և ապաստան ունենալով: Յեվ վորովհետև իշխանի ներկայութունն ավելի վստահութուն եր ներշնչում և թշնամու հարձակման միջոցին հնարավորութուն տալիս նույն դղյակում կամ ամրոցում ապաստանելու, ուստի տարիների ընթացքում, գլխավորապես հողագուրկ գյուղացիներ, գալիս բնակութուն ելին հաստատում այսպիսի դղյակների շուրջը: Դարերի ընթացքում, յերբ այսպիսի

բնակչութունը բազմանում եր և վտանգի միջոցին հնարավորութուն չեր լինում բոլորին ապաստանել փոքրիկ ամրոցում կամ դղյակում, սկսում ելին նույնպիսի խրամատ բաց անել և նույնիսկ պարիսպներ քաշել իրենց բնակության շուրջը: Այսպիսով առաջ են գալիս փոքր և մեծ քաղաքներ, վորոնք պատերազմների միջոցին իրենց խրամատների յետև կարողանում են պաշտպանել բնակիչներին, իսկ ամրոցը կամ դղյակը դառնում եր միջնաբերդ, գլխավորապես ազնվականութունը պաշտպանելու: Ճիշտ ե, պարիսպներն ընդիմադրում ելին թշնամիներին, սակայն մարդիկ կամաց կամաց սովորեցին կռվել և՛ այդ պարիսպների դեմ: նրանք պարիսպների մատչելի մասի հիմքերն աչնքան փորում ելին, վոր պատը բանդվում եր և հնարավորութուն եր տալիս այդ բացվածքից ներս մտնելու: Յեվ կամ մեծ-մեծ քարեր ելին գցում պարսպի վրա, վոր քանդվի: Այսպիսի քարեր գցելու համար թաթարները հնարել ելին մի տեսակ մեքենա, վոր բարան եր կոշվում:

Քաղաքների բնակիչներն սկզբում պարապել են գլխավորապես յերկրագործությամբ, այգեգործությամբ, բայց վորովհետև բնակիչների ավելանալով վարելահողի պակասութուն ե դգաց-

վել, սկսել են ավելի և ավելի առևտրին և արհեստներին անձնատուր լինել:

Սկզբում առևտուրն ունեցել է փոխանակության ձև. մարդիկ իրենց ունեցածն ու արդյունաբերածը փոխանակել են միմյանց հետ, բայց հետո, չերբ փոխանակության միջնորդ դրամի մասին գաղափար են կազմել, սկսել են ուղղակի դրամով ամեն ինչ առնել և ծախել:

Առևտուրն սկզբում չեղել է ներքին, չուրաքանչյուր շրջան բավականացել է իր շրջանի մարդկանց կարիքները լցնելով: Հետո ինկատի առնելով, վոր կրոնական և այլ տոների պատճառով մարդիկ տարվա վորոշ ժամանակներում խմբվում են վորոշ տեղեր, իրենք ել սկսել են շտապել աջնտեղ, տանելով իրենց հետ ապրանքներ, այսինքնով առաջ են չեկել տոնավաճառներ: Չծախված ապրանքը կամ կրկին չետ են բերել, կամ այդպիսի տեղերում պահեստներ հիմնելով պահել են միչև հետևյալ տոնակատարումը, և կամ տեղից-տեղ ման ածելով՝ վաճառել: Վորոններով նշանավոր ուխտատեղիներ՝ վաճառականները հետզհետե հեռացել են իրենց բնակավայրերից և առևտուր սկսել հեռավոր չերկրների հետ: Այսպես, նույնիսկ ամենահին ժամանակներում Հայաստանի վաճառականները տիեզերի վրա լաստեր ելին կապում և լողալով Յեփ-

րատ գետի վրայով, տանում ելին Հայաստանի ապրանքները Բաբելոն, ուր, նույնիսկ լաստերը ծախելուց հետո, տկերը բարձում ելին եղերի վրա և ցամաքով վերագառնում, վորովհետև Յեփրատի սրբնթաց հոսանքի հակառակ չելին կարողանում նավել:

VIII և IX դարերում չերբ արաբացիների տիրապետության միջոցին ճանապարհներ շինվեցին և միջազգային վաճառականութունն սկսեց ծաղկել, Հայաստանի միքանի քաղաքներ, ինչպես՝ Արտաշատ, Դվին, Վաղարշապատ, սկսեցին բավական մեծ դեր խաղալ և վաճառականական կենտրոններ դարձան:

Հայաստանից գլխավորապես արտահանում ելին՝ ձի, շորի, բամբակ, վորդան կարմիր, տորոն, պղինձ, չերկաթ, աղ, ցորեն, գարի, ծիրան, չիր, խաղող, չամիչ, տառելի և այլն:

Քաղաքների բնակիչները պարապում ելին և արհեստներով: Ամեն մի արհեստավոր ունենում եր աշակերտներ, վորոնք տարիների ընթացքում ավարտում ելին արհեստը և դառնում արհեստավորի ոգնական-բանվոր: Միառժամանակ ել այսպես աշխատելուց հետո բանվորը վարպետ եր ձեռնադրվում և ինքնուրույն գործ սկսում: Արհեստավորներն ըստ տեսակի համախմբելով՝ կազմում ելին համքարութուններ, իրենց ընդ-

հանուր շահերը պաշտպանելու, մրցության առաջն առնելու և փոխադարձ ոգնության հասնելու համար: Վերջապես, չերբ շոգու և քարածուխի գործածությունն ընդհանրացավ, արհեստանոցները մեծանալով դարձան գործարաններ, և նախկին վարպետները՝ սրանց կառավարիչներ: Սրանք այլևս չբավականացան իրենց նախկին սակավաթիվ աշակերտներով և չերկու-չերեք բանվորներով, սկսեցին բազմաթիվ բանվորներ աշխատեցնել, սրանց արտադրածի փոքրագույն մասը միայն տալով նրանց՝ մեծագույնը պահեցին իրենց: Այսպիսով նրանք նյութականապես շատ հարստացան: Սրանց վորդիքը, ունենալով նյութական ապահովություն և ստիպված չլինելով ապրուստի համար ամբողջ որը տնքալ, սկսեցին գիտություն ձեռք բերել: Յեվ ահա նյութի և գիտության, այս չերկու հզոր ուժերի շնորհիվ այնքան զորեղացան, վոր հեղափոխություն առաջ բերին և տապալեցին այն բոլոր արտոնությունները, վոր վայելում էր նախկին տիրապետող ազնվական դասակարգը, Սակայն, խլելով այդ դասակարգից կառավարության ղեկը, այս չերբորդ դասակարգն էլ, վոր սկզբում կռվում էր հանուն ազատության, հավասարության, չեղբայրության, իրեն վերապահեց շատ ու շատ արտոնություններ, սահմանափակեց բանվորների

ազատությունը և տիրացավ նրանց: Այս դրությունը շարունակվեց և շարունակվում էր, մինչև վոր բանվորական դասակարգը հեղափոխության միջոցով բարելավելով իր նյութական դրությունը՝ կարողացավ մտավոր ուժ ձեռք բերել և կառավարության ղեկը իր ձեռքն առնել: Այս հեղափոխությունը տեղի ունեցավ Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերին, Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂ

1. Վարելահող բանալու տնտեսություն . . . 3
2. Յերկրագործության բարելավումը, չեռադաշտ-
յան սերմնավարական տնտեսություն . . . 8
3. Գյուղացիներին հողի հետ կապելը . . . 10
4. Սև ու սպիտակ վոսկոր . . . 15
5. Բաղաքներ . . . 22



ՀՀ Ազգային գրադարան



NL0822969

170

1704



ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

I
2733